



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹԵԱՄԲ**

**ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ՊԱՏԳԱՄԸ  
 ՅՈՒՇՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Բոլոր անոնք, որոնք ներկայ եղան Ազգային Առաջնորդարանին կողմէ Խրիմեան Հայրիկի վախճանման 100րդ տարեդարձին նուիրուած յիշատակի ձեռնարկին, վկայեցին, թէ Խրիմեան Հայրիկները ինչո՛ւ անմահ են, անժամանցելի պատգամի վերածուած անոնց կեանքին ու գործին պատմութիւնը կը վերապրին ու պիտի շարունակեն վերապրիլ ազատատենչ ու հաւատացեալ իւրաքանչիւր հայու կամքին ու հոգիին մէջ:

Խրիմեան Հայրիկի յիշատակին նուիրուած հանդիսութիւնը, որ կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ, տեղի ունեցաւ Երեքշաբթի, 27 Նոյեմբեր 2007ի երեկոյեան ժամը 7:30ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ներկայութեամբ Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան, ծխական շրջաններու ժողովականութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ աւելի քան 500 հայորդիներու: Ֆիզիքապէս իր ժողովուրդէն ու աշխարհէն բաժնուելէ 100 տարի ետք, մեծանուն եկեղեցականն ու յեղափոխականը իր ոգեղէն ներկայութեամբ համախմբած էր իր պատգամին հաւատարիմներու հոծ բազմութիւն մը. անոր ոգեղէն ներկայութիւնը արտայայտութիւն գտաւ յայտագիրի գեղարուեստական թէ բանախօսութեան ու պատգամի բաժիններուն ընդմէջէն:

**«ՉԱՐԹՕՆՔԻ ՌԱՅՎԻՐԱՅ»**

Հանդիսութիւնը սկսաւ Առաջնորդ Սրբազան Հօր ու հոգեւորականաց Դասուն եկեղեցի մուտքով ու Տէրունական Աղօթքի հաւաքական արտասանութեամբ: Հանդիսավարը՝ Տիկին Թամար Սերայտարեան, բացման իր խօսքին մէջ վեր առաւ Աստուծոյ հաւատացեալ ծառայ ու մեր Չարթօնքին առաջատար մէկ ռահվիրան ըլլալու Խրիմեան Հայրիկի արժանիքները, նշելով, որ ան մեր պատմութեան մէջ անուն ձգած է հաւասարապէս իբրեւ կրօնական առաջնորդ, ազատատենչութեան ու իրաւունքի պաշտպան, գրող ու մանաւանդ ժողովուրդին ծառայող անձնաւորութիւն, մեծ դաստիարակ. անոր պատգամները այսօր ալ կը շարունակեն դաստիարակչական իրենց դերը: Ան մանաւանդ վեր առաւ

Աստուածաշունչին հաւատարմութեան Յայրիկին գործունեութիւնը, որ զինք դրած էր ժողովուրդին ծառայութեան ու առաջնորդութեան ճշգրիտ ուղիին վրայ:

Պէտք է արձանագրել, որ Տիկին Թամար ձեռնհասօրէն վարեց յայտագիրը, Յայրիկին մասին նշանաւոր գրողներէ մէջբերումներով համեմելով իր խօսքն ու ներկայացումը:

### **«Ի ԽՆԴԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ»**

Բանախօսն էր Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Իբրեւ հիմք օգտագործելով Խրիմեան Յայրիկի կեանքին ու գործունեութեան իրերայաջորդ հանգրուանները, Յայր Սուրբը վարակիչ ու մագնիսացնող ձեւով ներկայացուց Մկրտիչ Խրիմեանի ուրուագիծը, սկսելով անոր մանկութենէն, հասնելու համար Էջմիածնայ Ս. Աթոռի գահակալութեան հանգրուանները:

Յայր Պարթեւ առաջին հերթին անդրադարձաւ Մկրտիչ Խրիմեանի մանկութեան ու պատանութեան տարիներուն, ուսումնատենչ ու նորարարութիւններու հետամուտ երիտասարդին ու անոր կանուխ գործունեութեան, որոնք անցած են իր ծննդավայրին՝ Վանի մէջ: Ապագայ «Յայրիկ»ը ընտանիք կազմելէ ետք գացած է Պոլիս, ուսման ծարաւով Եւրոպա անցնելու դիտաւորութեամբ, սակայն դժուարութեանց հանդիպելով, մնացած է այդ օրերու Սփիւռքի մայրաքաղաքը, դարձած է ուսուցիչ ու պանդուխտներու օգնութեան փութացող ծառայող: Ապա, քանի մը տարիներու շրջագայութենէ ետք, ծննդավայր վերադարձին, դիմագրաւած է կեանքի առաջին մեծ դժբախտութիւնը. անոր կինն ու մանկահասակ աղջիկը մահացած էին: Մկրտիչ Խրիմեան կը դառնայ կուսակրօն վարդապետ ու կը մտնէ Յայց. եկեղեցւոյ ծառայութեան, սակայն առաջին իսկ քայլերէն՝ բարելաւում բերելու անոր խրոխտ կեցուածքն ու նախաձեռնութիւնները զինք դէմ յանդիման կը դնեն դժուարութիւններու, որոնք կը կրկնուին նաեւ հետագայ հանգրուաններու: Անոր կեանքի յաջորդ հանգրուանները կը կազմեն Վարագայ եւ այլ վանքներու վանահայրութիւնը, թերթերու հրատարակութիւնը, Յայաստանի հողին վրայ արդիական մօտեցումով հայկական առաջին դպրոցի եւ առաջին տպարանի հաստատումը, աւելի ուշ նաեւ՝ Պոլսոյ Պատրիարքութեան պատասխանատու պաշտօնին ստանձնումն ու սուլթանական իշխանութեան կողմէ անոր դէմ շղթայազերծուած հալածանքները, աքսոր, այս բոլորին կողքին ու զուգահեռ՝ իրերայաջորդ հրատարակութիւններ՝ կրօնական ներշնչումով ու ազգային դաստիարակչական խորքով հատորներ, որոնք մերթ ընթերցողը կը մղեն աստուածաշնչային խորհրդածութիւններու եւ դաստիարակութեան, սակայն նաեւ կը թելադրեն հայրենասիրութեան, աշխատանքի ու հայրենի հողին կառչիլ, անոր հետ «ամուսնանալ»:

Զաջասիրտ, պահանջատեր ու արդարատենչ Խրիմեան Յայրիկի քաղաքական գործունեութիւնը եւս կարեւորութեամբ բերուեցաւ

լուսարձակի տակ: Անկախ՝ պատրիարքութեան օրերուն անոր պայքարունակ կեցուածքներէն, բանախօս Յայր Սուրբը տպաւորիչ պատումով ու նոյնինքն Յայրիկին խօսքերէն մեջբերումներով նկարագրեց անոր Պերլին ուղեւորութիւնը, 1878ի խորհրդաժողովին մասնակցութիւնն ու անկէ վերադարձին՝ նշանաւոր Երկաթէ Շերեփի առակին պատգամը: Աստուծոյ խօսքին քարոզիչը Էր Նաեւ ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանը, զայն արդար ինքնապաշտպանութեան մղողը ու մեր յեղափոխական պայքարը հունաւորողը:

Խրիմեան Յայրիկի ազատատենչութեան ու պահանջատիրութեան արի պայքարը չէր սահմանափակուած միայն Արեւմտեան Յայաստանի Դատին ծիրին մէջ, որովհետեւ ան, Ամենայն Յայոց Կաթողիկոս օծուելէն ետք ու անկէ առաջ, յաճախ դիմակալած է Ցարական Ռուսիոյ բռնադատութիւնները ու համահաւասար ուժգնութեամբ պայքարած է Յայաստանը հայաթափելու նենգ ծրագիրներուն դէմ: Սուլթան Յամիտի դէմ ծառայող մեծ առաջնորդը ամուր կերպով ընդդիմացած է Յայ Եկեղեցւոյ կալուածները իւրացնելու եւ հայկական ուսումնարանները փակելու ցարական քաղաքականութեան դէմ ու ձախողութեան մատնած է զայն: Այս իմաստով, Խրիմեան Յայրիկի ողջ կեանքը եղած է պայքար՝ բռնադատող կայսրութիւններուն, ինչպէս նաեւ՝ հայկական կեանքին տիրել փորձող խաւարամիտներուն դէմ: Յայր Սուրբը բազմաթիւ մանրապատումներով ներկայացուց այս բոլորը, գրաւելով ներկաներուն ունկն ու աչքը, Խրիմեանի անժամանցելի պատգամները փոխանցելով բոլորին:

Նշենք, որ յայտագիրի գեղարուեստական բաժինին մասնակցութիւն բերին Յերմիէ Ամիրեան (Երզ), Միսակ Գայսերեան (Երզ) եւ Արմիէ Տերտերեան (Երզեհոն):

### **«ԽՐԻՄԵԱՆ ՅԱՅՐԻԿԸ ՃԱՆՉՆԱԼՈՎ, ՉԱՍՏՈՒԱԾ ԱԻՆԻ ԿԸ ՍԻՐԵՆՔ»**

Յանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Յայրը, որ նախ գահատանքով արտայայտուեցաւ օրուան բանախօսին, գեղարուեստական բաժնի մասնակիցներուն եւ կազմակերպողներուն մասին:

Խօսելով այս ձեռնարկին շարժառիթին ու նպատակին մասին, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Խրիմեան Յայրիկին կոթողական դէմք մը ըլլալու արժանիքները եւ ընդգծեց, որ զայն աւելի լաւ ճանչնալով, մենք աւելի կը սիրենք զԱստուած, որովհետեւ ան Աստուծոյ ծառայութիւնը կենսաւորած էր ժողովուրդին ու անոր իրաւունքներուն պաշտպանութեան իր նուիրումով:

Առաջնորդ Սրբազանը նկատել տուաւ, որ Խրիմեան Յայրիկի կեանքին ու գործին մօտէն ծանօթացողը կ'անդրադառնայ, որ ան անվեհեր պայքարող մըն էր, հալածանքէ ու խաչէ չվախցող, այլ միշտ պատնէշի վրայ մնացող առաջնորդ: Տաճարը մաքրագործող Զրիստոսի օրինակով, ան ալ պայքարի ելաւ բռնադատող ցարին դէմ ու արգելք եղաւ մեր Եկեղեցական կալուածներուն գրաւման: Ան ընդգծեց, որ Յայրիկին վախճանման 100ամեակը առիթ է վերանորոգելու անոր պատգամով մարմնաւորուած

ուխտը, ընկրկումներ չունենալ մարտահրավերներու դիմաց, գնահատել եկեղեցական ու ազգային մեր սրբութիւնները եւ ներողամտութեան ճամբով ծառայել եկեղեցւոյ ու ժողովուրդին, Խրիմեանի ճամբով սիրել զԱստուած ու անոր կեանքի օրինակը որդեգրել իբրեւ ուղեցոյց: «Վստահ եմ որ անոր հոգին այս պահուս այս տաճարին մէջ կը սաւառնի. տարեք զայն ձեզի հետ ու առաջնորդուեցէք անոր օրինակով», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով ու «Կիլիկիա»ի խմբերգումով: Այնուհետեւ, ներկաները եկեղեցւոյ սրահին մէջ վայելեցին Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութիւնը:

## **CELEBRATING THE LIFE AND TIMELESS MESSAGE OF KHRIMIAN HAYRIG**

On the evening of Tuesday, November 27<sup>th</sup>, the Western Prelacy commemorated the 100<sup>th</sup> anniversary of the passing of Khrimian Hayrig with a lecture held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Outreach Committee. Over 500 faithful, including Religious and Executive Council members and representatives of Prelacy parishes had gathered inside St. Mary's Church to hear Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian speak on the life and timeless messages of Khrimian Hayrig. Participating in the artistic program with songs were Hermine Amirian, Misak Kayserian, and Armine Derderian on the organ.

The evening began with the Lord's Prayer followed by welcoming remarks by emcee Mrs. Tamar Seraydarian. V. Rev. Fr. Barthev began by speaking of Khrimian Hayrig's life as a child and adolescent in his hometown of Van. Khrimian Hayrig then headed to Constantinople to further his education and with the intention of continuing to Europe from there. However, due to some difficulties he remained in Constantinople where he became a teacher and assisted other emigrants. Upon his return to his birthplace he found that his wife and daughter had died and it was following this tragedy that Khrimian Hayrig fully devoted himself to serving in the Armenian Church. In the following years he served as abbot of the Varak Monastery, published newspapers, established the first modern Armenian school and printing press, and became the Patriarch of Constantinople.

V. Rev. Fr. Barthev then focused on the patriotic activities of Khrimian Hayrig, his travel to Berlin to participate in the conference of 1878, and his famous Iron Ladle speech. Khrimian Hayrig's struggle for rights and demands was not however limited to the plight of Armenians in Western Armenia, for after he became Catholicos he often confronted the tsarist Russian regime and revolted against plans to expel the Armenian population from Armenia and was able to prevent the handing over of church properties to tsarist Russia and the

closing of Armenian schools. Khrimian Hayrig's life was in essence a struggle; a struggle against oppressive regimes as well as against adversaries.

Closing remarks were delivered by the Prelate who first commended the participants and the organizers of the event. By knowing Khrimian Hayrig more closely we can become closer to God for it was his devotion to God that drove him to faithfully serve his people and to defend their rights, continued the Prelate. The Prelate concluded by saying that on this 100<sup>th</sup> anniversary of the passing of Khrimian Hayrig now is the time for us all to be renewed spiritually by his enduring messages. We must not shy away from challenges, dutifully serve our church and people, and live our lives guided by the ideal he set for us. The program concluded with the Prelate's benediction and "Giligia", and was followed by a reception in the hall organized by the parish Ladies Auxiliary.